

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Արդեն երրորդ տարին է, որ լույս է տեսնում «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը:

Չանդեսի լույս ընծայումն առայժմ դանդաղ է ընթանում: Դա ունի իր պատճառները: Նախորդ երկու տարին եղել է գոյացման ու հիմնավորման ժամանակ: Այդ ընթացքում ջանքեր են գործադրվել ոչ միայն խմբագրական կազմի ստեղծման, գիտական հոդվածների և այլ կարգի տեղեկությունների ընտրության և խմբագրական առումով, այլև արտաքու կարգի որոշ հանգամանքներ հաղթահարելու տեսակետից:

Այսօր ևս թե՛ գիտական-խմբագրական և՛ թե՛ մանավանդ հրատարակչական-տպագրական մարմինները վճռական են իրենց ձեռնարկման մեջ: Չետազայում ևս մեծ ջանքեր են գործադրվելու հայոց լեզվի գիտական ուսումնասիրությանը նպաստ բերող սույն հանդեսի հրատարակման համար:

Այս գործի նախաձեռնողները, ինչպես գիտենք, եղել է «Տաթև գիտակրթական համալիրը»: Վերջինս նախանձախնդիր է ոչ միայն այս, այլև ուրիշ բնագավառների վերաբերող հանդեսների հրատարակման գործում: Դա բավականին շնորհակալ գործ է, որոշակի ներդրում մեզանում գիտական և այլ կարգի գրականության հրատարակման և տարածման մեջ: Ուստի գիտական հասարակայնությունը թերևս ավելի ուշադիր պիտի լինի նման ձեռնարկման նկատմամբ ոչ միայն գիտական աշխատանքների (հոդվածների, զրախոսությունների և այլ կարգի նյութերի) տրամադրման, այլև լույս տեսած գիտական նորույթի ձեռքբերման և օգտագործման տեսակետից:

Չանդեսի նախորդ համարներում տեղ էին գտել հայոց լեզվի տարբեր կողմերին վերաբերող այնպիսի աշխատանքներ, որոնք արժանացել էին այդ բնագավառի ուսումնասիրողների ուշադրությանը՝ թե՛ Չայաստանում, և թե՛ արտերկրում: Սա կարևոր է ոչ միայն ինքնին, այլև հետագա աշխատանքների ձեռնամուխ լինելու տեսակետից:

Տպագրվող նյութերը լինեն հողված կամ գրախոսություն, գիտական կյանքը ներկայացնող տեղեկություն, կարող են լույս տեսնել ոչ միայն հայերեն, այլև ուրիշ լեզուներով, գիտական հողվածները սովորաբար ունենում են երկու լեզվով ամփոփում, որն ավելի է մեծացնում հողվածում տեղ գտած տեղեկության մատչելիության ծավալը:

Չանդեսում տպագրվում են այնպիսի աշխատանքներ, որոնք ըստ ամենայնի բավարարում են գիտական որակավորման կողմից ներկայացվող պահանջներին, դրվում են հասարակական գիտությունների այս ոլորտի ուսումնասիրողների սեղանին և նպատակ ունեն մեզանում առաջ մղելու հայերենի և առհասարակ լեզուների գիտական ուսումնասիրության գործը:

Չայերենի՝ իրեն պետական լեզվի, գիտական ուսումնասիրությունն այսօր ևս մեծ կարևորություն ունի մեր մտավոր մշակույթի առաջընթացի մեջ, ուստի մեծանարկումն իր հերթին հետապնդում է նաև այդ առաջընթացին ինչ-որ չափով նպաստելու նպատակ: